ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻՍՏԻ, ԴԱՍՏԻԱՐԱԿԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՐԱՆԳԻՉԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբերի «Ծիածան» մանկապարտեզ» (գտնվելու վայրը ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ծաղկաբեր բնակավայր 2-րդ փողոց 12 շենք) հայտարարում է նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի՝ 0,25 դրույք, դաստիարակի՝ 1,12 դրույք, երաժշտության դաստիարակի՝ 0,25 դրույք և ֆիզկուլտուրայի հրահանգչի 0,25 դրույք թափուր պաշտոնները զբաղեցնելու համար (այսուհետ՝ Մրցույթ):

1.Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ 17.02.2022թ-ի N 08-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության կարգի 3-րդ մասի 12-րդ կետով պահանջվող փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:
Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝
1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2. դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
3. տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.
4. դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Մրցույթը անցկացվելու է՝ ԿԳՄՍՆ 17.02.2022 թվականի N 08-Ն հրամանի համաձայն:

Մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը՝ ԿԳՄՍՆ 27.03.2024թ-ի N 20-Ն հրամանի. Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի ապրիլի 21-ից մինչև 2026 թվականի մայիսի 21-ը ներառյալ ամեն օր ժամը 9:00-ից 18:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից, ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, բն. Ծաղկաբեր՝ 2 փողոց 12 շենքում:

Մրցույթը անցկացվելու է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.10.2024թ-ի №1981-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի:

Մեթոդիստի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի մայիսի 27-ին ժամը 10:00-ին:
Դաստիարակի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի մայիսի 27-ին ժամը 12:00-ին:
Երաժշտության դաստիարակի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի մայիսի 27-ին ժամը 14:00-ին:
Ֆիզկուլտուրայի հրահանգչի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի մայիսի 27-ին ժամը 16:00-ին:

ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, բն. Ծաղկաբեր՝ 2 փողոց 12 շենքում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098-22-21-77 հեռախոսահամարին: